



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99 U

2h-43

ՏԵԿ. ԸՆՐԱԲ.:

Տ103 833

891.99.ր.

Ա-43

ԿՎ.

## ԳՈՒԹԱՆԻ ՄԱՏԱՂԸ

Պատկերագարդ

1002  
6494

Պատմւածք

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Դազախի գիրական կանքից)



Էլեքտրաշաբ. տպ. «Հերմին» Ա. Պ.

Եղիգարեանի Մադաթ. փ.

1907

-5 FEB 2013

Արտատպւած «ՀԱՄԿԵՐ»-ից



աղը, հինգշաբթի,  
Համբարձման տօ-  
նըն է,

Օրը՝ երեկոյ էր,  
արեք թերւել էր

կուլ գնալու։ Նրա ոսկեզօծ  
թէժ ճառագայթների փոխարէն՝  
արծաթափայլ հով շողերն էին  
թըռուըռում՝ շինական եկեղեցու  
կաթուղիկէի երեսին։

Գիւղի «բէօխվա-բէղխուգէքը»,  
մանկալն ու հոտաղը, ուլախա-  
րածն\*) ու հօրիբչն \*\*), մի խօսքով  
բոլորը, բոլորը հաւաքւել էին ե-  
կեղեցու գաւիթն ու վաղւան մա-  
տաղի նախապատրաստութիւննե-  
րի մասին մտածում։

\*) Լծկան անասուններ արածաց-  
նող.

\*\*) Գութանի երկրորդ և միւս լուծ-  
ները կառավարողներ։

Երկար խօսելուց ու խորհելուց  
յետոյ, մաճկալ Ունանը վերջ տւեց  
վրոյցին նրանց հանգստացնելով.

—Տղէրք շան, դէ հըմիկ որ, մա-  
տաղի ամեն ինչը պատրաստ է:  
Մենակ թէ էգուց՝ ընզնանի պը-  
ղինձերը շուտ կը բերէք, որ  
«Եփը» վախտին դնենք կրակին:

—Եատ լաւ, ուստա Ունան,  
միամիտ կաց, պատասխանեցին  
նրան կարգադրիշի օդնականներն  
ու յանձնառու հոգատարները, և  
սկսեցին ցրւել, որ գնան տուն,  
ժամանակից մի քիչ շուտ քնեն՝  
վաղը կանուխ գարմինելու:

Գնացին... Գնալիս՝ բարեպաշտ  
ծերունիները մօտենում էին կար-  
գադրիչներից սրան-նրան և բաղ-  
ցրութեամբ հարցնում:

—Զեզ զուրբան, գութանի մա-  
տաղի հըմար՝ մինուճար բալիս  
կրտամ զոհելու, ուր մնաց թէ  
մատաղացու: Էղ խի չէք մեր  
զուռն էլ գալի, խի, մենք մատա-  
ղակեր չենք:

—Քեզ արքայութիւն, ապի, լաւ  
բոլ ստացել ենք ձեր տանից, շէն  
ու շէն կենար,—կրկնում էին հաւա-  
րողներն և շտապում դէպի տուն:




II

Գութանի մատա-  
ղի զոհաբերութեանը  
նախընթաց օրւանից  
պատրաստում են, նաև գիւղի  
փոքրերը՝ տղայ թէ աղջիկ, բոլորը  
մի հաշիւ:

Նրանք բոլորը, առանձին ա-  
ռանձին, կամ խմբերով զաշտ ու  
արօտ ընկած, գոյնզգոյն ծաղիկ-  
ներից փոքրեր վնչիկներ են կա-  
պում և վերադառնալով գիւղը,  
ցըրում են թաղէթաղ ու ամեն  
տնւորի այդ վնչիկներից նւիրում:  
Փոխարէնը տան տէրը մատաղա-  
ցու է տալիս նրանց: Այդ օրւան  
հաւարած ձուն, պանիրը, շօրն և  
ուրիշ ուտելեղէնները՝ վաղը մա-  
տաղի սեղանին զարդ են զառնա-  
լու և զութանաւորների սուփրէն  
շէն անելու:

—Առէք ձեզ զուրբան, առէք.

ձեր աբդաը սըտի խորհուրդը՝ ա-  
ւալի դուք կըզայ Յստծուն, առէք,  
ընդունելի ըլի ձեր մատաղը,—  
ասում են փնջիկները ստանալով,  
տան մեծ նանն ու տատը և փոք-



Ծաղիկներից փունջ է կապում

ըիկ հաւաքողներին առատու-  
թեամբ տալիս են իրանց հասա-  
նելիքը:

— Ենորհակալ ենք, — փրափում  
են նախշուն աղջիկներն ու չալ-

տիկ տղաներն և շաբունակում  
գարձեալ իրանց հաւաքում:

Եւ այսպէս՝ չորեքշաբթին մըթ-  
նում է... Աստեղազարդ գիշերը  
թեակոխում է ամբողջ գիւղն իր  
շրջակայցրով և ամենքին մատաղի  
ախորժակով շուտ ըուն անում:

— Դէհ, երեխէք ջան, — խրա-  
խուսում է Բէգլար ապին իր  
թոռներին, — ձեզ տեսնեմ, բոլորդ  
էլ հօրիքչի էք, գութանաւորների  
ձեռի եազլըիր: Առաւօտը լոյսը  
ծագելուն պէս՝ ամեն մինդ մի ա-  
ման կառնէք և կըգնաք մատա-  
զատեղը՝ համ կօգնէք եփողնուն,  
համ էլ բօլ-բօլ փայ կըստանաք  
ու տուն կըզաք:

— Ապի, ես կովկիթն եմ տանե-  
լու, — ոգեսորւում է Մուկուչը, —  
Մաճկալ եղօն՝ ինձ լաւ է ճանա-  
շում, ես հերու (անցեալ տարի)  
նրա հօրիքչին եմ եղել:

— Իի, հօտաղ Գիքորը ինձ ճա-  
նաշում չի, — մէջ է ընկնում Վե-  
տօն, — ես էլ կաթնի բաղիէն եմ  
տանելու. տեսնենք՝ ում շատ մա-  
տաղափայ կըտան:

— Ապի ջան, սրանք համ բանի  
խաբար չեն, — խօսում է Մարօն

վերմակի տակից գլուխը հանելով,—ես էսօրւանից մատաղատեղն եմ եղել. մատուռի բազը աւլել, թամզել եմ, փէտ եմ կրել: Ինձ համկալ Պետին կանչել է, որ առաւօտը վաղ գնամ... էս ես զիտեմ. թէ ինչ կը տանեմ և ինչքան մատաղ կը բերեմ:

Այսպիսի խօսակցութեան մէջ բոլորի քունները տանում է և խըռըմփոցը տիրում է տան մէջ:

Բարի զիշեր նրանց... եւ մէկէլ յանկարծ լսում է զանազան խըռըմփալի խօսքեր.

—Օխայ, ինչ անուշ է է:

—Մի քիչ էլ ինձ տէք, մսիցը, մսիցը:

—Ես շօրվեն եմ ուզում:

Եւ նրանք բոլորն երազի մէջ էին:



III

Համբարձման հինդշաբթին ծնւռում է: Օրը Մայիսեան գեղածիծաղ օրերից մէկն էր,—մի սիրուն, թըռւրուան, շող-շողուն, ապրեցնող մի օր:

Արեգնազան արել մի շիշիմ՝ հազիւ բարձրացած, արդէն ս. Գէորգի վանքի զանգերը՝ «տան, տին, տօն» թակւելով, խաղաղ շինականին մատաղատեղն են հրաւաիրում:

... Գնում էին ամենքն, առանց խտրութեան՝ հարուստ ու աղքատ, ծեր ու հասակաւոր, երիտասարդ ու շափահաս, մէր ու մանուկ, տղայ թէ աղջիկ, բոլորը գնում էին: Եւ նրանց գնացքն այնքան համապատասխան է նըրանց տարիքին, որ առանց նայելու կարելի է իմանալ թէ ո՞լ է անցնողը:

—Թակ-թըկ, թակ-թըկ՝ զոյդ

թակ, տալով գնում՝ էին յամբաքայլ  
բոլոր ապիները:

—Թակ-թըկ-թակ, թակ-թըկ-  
թակ, անցնում էին կայտառ ծե-  
րունիները:



Ա. Գևորգի վանիքը

—Թակ, թակ, թակ, թակ, ըշ-  
տապում էին երիտասարդները:

—Չըստ-ֆըստ, չըստ ֆըստ,,  
զալիս էին կանայք:

—Թըռոռ, թև առած թռչում  
էին մանուկները:

Գնացին, ողջ գիւղը գնաց...  
Աչըդ բարին տեսնի, մատաղը վեց  
տեղ, վեց ահազին պղնձների մէջ՝  
խըլթ-խըլթալի եփ էր զալիս ու  
բըլգ-բըլգում և կըակը՝ ամեն մի  
պղնձի տակ ծով դարձած, փայ-

տի կտորներ էր՝ որ լավում էր,  
մոխիը շինում և դարձեալ շէր  
կշտանում:

Պղնձների մօտ կանգնած կե-  
րակուր եփողները՝ մեծ ուշադր-



Դնում են մատադի

ըութեամբ հետեւում էին մատաղին  
և երեխն մի-մի կտոր միս պղնձից  
հանելով՝ ուտում էին – համը տես-  
նում, և ուրիշների ախորժակը  
զրգում, բերնի ջուրը բերում:

Վերջապէս պատրաստում՝ է մատաղը և կարգադրիչ ուստա Մուսէսը ձայն է տալիս.—Տղէք, տէրտէրին կանչեցէք, գայ մատաղն օրհնի, լաւ բոլ ժողովուրդ է կիտւել և էլ մատաղի հինց ուտելու ժամինակն է:

— Լաւ, ասաւ ուստա Մուսէսը, թէզ արէք, սոված սիրաներս ձէն է տալիս, — միշամտում են ամենքը:

Քահանան գալիս է իր տիրացւով, օրհնում մատաղը, ապա, անցներով սեղանի ծայրը, մի ծաղկաւէտ տեղ, իր տիրացւի հետ ծալապատիկ բազմում է։ Կանաչ տափերին նստոտում են և միւսները, գրեթէ բոլորը մէկս-մէկուց ցած—կարգով, ըստ հասակի և մեծութեան։ Նրանք փափախները վերցնում են և ակնապիշ սպասում մատաղի սինուն (մատուցարան)։

Քաժանում է մատաղը. քահանան՝ ամենից շուտ, առաջի թասը ձեռքին է առնում և սկսում է խօսել.

— Օրհնեալ ժողովուրդ, գուք զիտէք, որ էս զութանի մատաղը կտրում ենք, որ եկող տարւայ զութանի ակօսը «բրատու» (պըտ-

ղատու) լինի, նրա վարածը՝ անփորձ մնայ, ցանածն ու տափածը հազար դառնայ։ Որ ապրի մաճկալն ու հոտաղը, ողջ լինի ուլախարածն ու հօրիքչին, դւաթով մնան գոմէշն ու եզը, արջառն ու ձին, մի խօսքով նրանք, ովքեր վար ու ցանքի օրերին շաբաթներով ու ամիսներով, տան երեսշեն տեսնում։ Դեհ, միաբերան աղաղակեցէք՝ ապրին մեր աշխատաւորները, որ էս նեղութիւնները բաշում են, ծառայում են Աստծու ճանապարհին, և էլ ամեն, Տէր Աստոծ, օրհնեալ լիցիք, ամեն։

Տէրտերը վերջացնում է ճառը և օղին խմում։ Ամենքը միաբերան աղաղակում են,

— «Ամեն, ամեն Տէր Աստոծ» և օղին կուլ տալով, սկսում են մատաղն ուտել՝ և ձեռք ու մատները լպըստերով բարեմաղթել։

— Տէր Աստոծ, Քու աշըը քաղցը կենայ մեր անդ ու անդաստանի, մեր վար ու դաշտի վրա։


— Ամեն, լսում է աջ ու ձախից։

— Դալար կենայ մեր գեղի մաճկալների ձեռն ու ոտը, դւաթին

ըլի մեր եկն ու գոմեշը, ամենքն  
էլ ապրեն ջանսաղութիւնով:

— Ողջութիւն ամեն, տէր Աստօծ:

— Ապրեն մեր հօտաղն և ու-  
լախարածն, մեր հօդիքը ջէհէլ-  
ջուհուլները, ցուղուտութիւն (ծու-  
լութիւն) չանեն, մեծանան, մեր  
պատիւը իմանան:



Սերել-կըտացել վերապառում են

— Այ ապրեն, շատ ապրեն,  
Կերան և օրհնեցին, միմի թաս  
գինի էլ վերեկց կուլ տւին, և յե-  
տոյ վեր կենալով, դունչումուշը  
փափախներով, կամ փէշերով սըր-  
բեցին, միրուճները տըմբ-տըմ-  
բացներով ճանփայ ընկան ու գը-  
նացին:

Նրանք ծերունի ապիներն էին:



#### IV

**Բ**ոլորին փայ համնե-  
լուց յետոյ, հերթն եկաւ  
մանուկներին - հօրիքշի-  
ներին: Նրանք էլ նստոտեցին  
մի ստւերաշատ ծառի տակ և ինչ  
ձեռքներն ընկաւ՝ կուլ տւին, կե-  
րան, Տարն ու հովն՝ ով էր հարց-  
նում, բաւական էր որ մատաղը  
տային՝ այնուհետև մնաս բարե...

Նրանք էլ կերան, կշտացան:  
Վեր կացան, տարած ամանները  
վեր առան ու լիք-լիք ճանապարհ-  
ուցին տուն: Գնալիս՝ ճանապար-  
հին զանազան հանար-շիզար խօ-  
սելով և «պրկու» ածելով, միմեանց  
ուրախացնում, և սրախօսում էին:

— Պնունու, հա-պնունու, պրի-  
պնուն-հա-պուու, — փչում էին  
հասկերի ծղնօտից շինած պկիւ մէջ  
և տուն շտապում թըռչկոտալով:

Կերան, կշտացան, փայներն ա-  
ռան ու գնացին մեր մայրերն էլ:  
Նրանց գալն ու գնալը, նրանց  
ուտելն ու խմելը, նրանց խօսքն  
ու զրոյցը, զըեթէ՝ ոչ ոք շիմա-


ցաւ: Նրանք շխօսկան եկել, շը-  
խօսկան էլ գնացին: Նրանց մէրը՝  
հէնց անխօս էլ ծնել է նրանց:  
Միայն, նազիկ-մազիկ պուճուը  
հարսների հագուստներին կարած  
արծաթի չանչխուը - մանչխուը-  
կըռնանոցների շըխկ-շըխկոցն էր  
նրանց լոււթիւնը խանդարում և  
մէկէլ՝ ազիզ-մազիզ Սօնիկների  
ծամերն էր, որ կոճկազարդ արած,  
տասնեակ ճիւղերով, միմեանց դիպ-  
չում էին և ձէն ու ձուն հանում:

Մատաղն ամենքին բաւակա-  
նութիւն տւաւ: Ամիսներով մաի  
համ չիմացած հարիւրաւոր մարդ՝  
այդ օրը հարսնքաւորի էին նման,  
կերան կշտացան ամենքն և զնա-  
ցին լիքն ու բրին:

Մեազած մատաղը՝ լաւ լաւ  
կոտրնելլ շրջար-բանդէն, չաղ-չաղ  
պատառները, խորոված ացուն, տօլ-  
մացուն՝ մնում էր մաճկալներին,  
ամօլչիներին, հօտաղներին...

Երանքը՝ էլ, երբ ամենքին բա-  
ռականութիւն տւին, նստուեցին  
սուփրի շուրջը, մէջ բերին հողեպա-  
հուստ ազիզ կերակուրները և զափ  
ու գուռնով մի լաւ քէֆ արին:

Այ թէ լաւ Համբարձում արին  
հա: Է՛ ընէկ էն օրին...



ՀՀ Ազգային գրադարան



NL0396012

6347